Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2022-2023 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն *(20 միավոր)*

1. Ե՞րբ է գահակալել հայոց Խոսրով 1-ին թագավորը. 0,5 մ.
   ա) 66-88 թթ. բ) 252-287 թթ. գ) 198-215 թթ. դ) 216-252 թթ.
2. Ո՞վ է գլխավորել վասպուրականցիների պայքարը Նկան ամրոցի պաշտպանության ժամանակ. 0,5 մ.
   ա) Բագարատ Բագրատունի բ) Աշոտ Արծրունի
   գ) Եսայի Աբու-Մուսե դ) Արտավազդ Մամիկոնյան
3. Որտե՞ղ է գտնվում Ծումբ գյուղը. 0,5 մ.
   ա) Բասեն գավառում բ) Ապահունիք գավառում
   գ) Բագրևանդ գավառում դ) Բջնի գավառում
4. Ո՞վ է «Տիեզերական պատմություն» աշխատության հեղինակը. 0,5 մ.
   ա) Ստեփանոս Օրբելյան բ) Մովսես Խորենացի
   գ) Հովսեփ Գաթըրճյան դ) Աբրահամ Երևանցի
5. Ե՞րբ է ստեղծվել Հայոց ազգային բյուրոն. 0,5 մ.
   ա) 862 թ. բ) 1912 թ. գ) 1903 թ. դ) 1918 թ.
6. Որքա՞ն հայ էր ապրում Կիլիկիայում 1920 թ. սկզբին. 0,5 մ.
   ա) 150 000 բ) 22 500 գ) 50 000 դ) 180 000
7. Ո՞ր թվականին է ազատագրվել Բերձորը (Լաչինը). 0,5 մ.
   ա) 1990 թ. բ) 1991 թ. գ) 1992 թ. դ) 1994 թ.
8. Ե՞րբ է սպարապետ Մուշեղը Գանձակի մոտ ջախջախել պարսից զորքին. 0,5 մ.
   ա) 364 թ. բ) 371 թ. գ) 370 թ. դ) 372 թ.
9. Ե՞րբ է կնքվել Հռանդեայի պայմանագիրը: 0,5 մ.
10. Ո՞րերորդ դարում է ձևավորվել Աքքադի պետությունը: 0,5 մ.
11. Ո՞վ է 7-րդ դարի երկրորդ կեսին հաջորդել հայոց իշխան Աշոտ Բագրատունուն: 0,5 մ.
12. Որքա՞ն էր Արտավազդ 2-րդի՝ Անտոնիոսին տրամադրած զորամասի թիվը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Վազգեն բդեշխի սպանությունը
    բ) Արաբների ջախջախումը Արծափ ամրոցի մոտ
    գ) Վարդի ազատվելը պատանդությունից
    դ) Կամսարականների կանանց բանտարկումը Շապուհ մարզպանի կողմից
    ե) Գյուտ կաթողիկոսի մեկնելը Տիզբոն
    զ) Պարսից գնդի ջախջախումը Արծաթի գյուղի մոտ
    է) Պերոզի գահակալության սկիզբը
    ը) Հազարավուխտի ներխուժումը Հայաստան
    թ) Ճարմանայի ճակատամարտը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Ոսխա 2. Կիլիկիա 3. Ծոփք 4. Շրեշ բլուր 5. Երրորդ Հայք 6. Ռշտունիք
    ա. Մելիտինե բ. Վաղարշապատ գ. Բնաբեղ դ. Բասեն ե. Իսոս զ. Գուկանք

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Կոգովիտ և Ծաղկոտն գավառները գտնվել են Սյունիքում:
    բ) Բացի Արարատյան դաշտից՝ Արգիշտիխինիլի անունով քաղաք գոյություն է ունեցել նաև Մուշի շրջանում:
    գ) Հնագույն Էբլա պետությունը զարգացել է Միջին Ասիայում:
    դ) Համահայկական առաջին թագավորության հզոր ու կատարյալ մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայկական լեռնաշխարհից դուրս՝ հասնելով Իրան, Կովկաս, Հունաստան:
    ե) Վանի թագավորության անկմանը նպաստել են նաև հյուսիսից ասպատակող սարմատները:
    զ) 2 թ. Հայաստանում տեղի է ունեցել հուժկու ապստամբություն Հռոմեական Հանրապետության դեմ:

է) Վաղարշապատի թագավորական պալատը միջնաբերդում էր, որտեղից սկսում էր ներքին փողոցը:
ը) Արքայական ճանապարհի մի հատվածը (մոտ 330 կմ) անցել է Հայաստանի հյուսիս-արևելքով:
թ) Հույն պատմիչը փաստում էր, որ, հանձին Տիգրան Վերջինի, իրենք գործ են ունեցել «վսեմ քաջությամբ օժտված հակառակորդի հետ»:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա) «Արքայական գունդը» հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժերն էին:
բ) Մաղխազը արքունի և թագավորական պահակազորի հրամանատարն էր:
գ) «Գահնամակ»-ը սահմանում էր գահաժառանգության կարգը:
դ) Հին հայոց հավատքի և քրիստոնեական սկզբնական շրջանում «հեթանոս» նշանակել է այլակրոն:
ե) «Ավատ» նշանակում է ավանդաբար ծառայել:
զ) Ծառայող ազնվականության մասնատիրական տնտեսություններից էին համայնական հողերը:
է) Մուհթասիբը հետևում էր պարիսպների, պալատների, տաճարների, ճանապարհների կառուցման աշխատանքներին:
ը) Արշակունյաց Հայաստանում «ոստանիկ այրուձին» նախարարներին ենթակա հեծելազորն էր:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա) Վանի թագավորության կրոնն ուսումնասիրելու համար կան երկու հիմնական աղբյուրներ՝ սեպագիր արձանագրությունները և պեղումներից հայտնաբերված պատկերազարդ հուշարձանները:
բ) Վանի թագավորության դիցարանում գոյություն ուներ «Հոգիները տեղափոխող աստծո» պաշտամունք:
գ) Մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում և սերում է Հայաստանի նախնադարյան ժայռապատկերներից:
դ) Վանի թագավորության սեպագիր դպրությունը ճշտորեն չի հաղորդել տեղական լեզվի հնչյունական համակարգը:
ե) Առաջին արքան, որ հողեր է շնորհել Հայոց Եկեղեցուն, Խոսրով 2-րդի որդին էր:
զ) Արշակ 2-րդը թագավորական իշխանության ամրապնդման և նախարարական կենտրոնաձիգ տրամադրությունները զսպելու նպատակով կառուցել է Արշակավան քաղաքը:
է) Հուսիկ-Շահակը Կ.Պոլիս չի մեկնել ձեռնադրվելու, ինչով էլ հաստատվում է Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությունը:
ը) Կոստանդիոս 2-րդը Հռոմեական կայսրությունում պատանդ էր պահել Տիրանի որդիներին և թոռներին:
թ) Աղբիանոսի տոհմի ներկայացուցիչներից եղել են և՛ քրմեր, և՛ կաթողիկոսներ:

1	2	3

18. Գտե՛ք, դո՛ւրս բերեք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

591 թ. պարսկա-բյուզանդական բաժանման արդյունքում բյուզանդացիները կազմավորեցին մի շարք խոշոր նահանգներ՝ «Մեծ մասն Մեծ Հայոց» (տարածվում էր մինչև Սև ծովի ափերը), «Մասն Մեծ Հայոց» (Բարձր Հայք), «Չորրորդ Հայք կամ Վերին Միջագետք» և «այլ Չորրորդ Հայք», «Մեծ Հայք» (Տայք), «Խորագոյն Հայք», «Ներքսագոյն Հայք» (Այրարատ նահանգի մեծ մասը») և այլն:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Պատմում են նույնպես, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա հայերեն տառերով գրված էր հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն»:

ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
բ. Հին հունական ո՞ր առասպելաբանական հերոսն էր Նյուսիան:
գ. Ե՞րբ է կառավարել մեջբերված հատվածում նշված Արշակ արքան:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

10-րդ դարում Վասպուրականով էր անցնում միջազգային առևտրի հարավային ուղին, որի վրա առաջացել էին տնտեսական խոշոր կենտրոններ՝ Վանը, …-ն (1), …-ը (2), …-ը (3):

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6200 տարեկան է, ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր խոշոր գետի և նրա վտակների ավազանում է գտնվում նահանգը:

23. Արարատյան դաշտի ո՞ր նշանավոր հնավայրից է լուսանկարը. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Հայոց պատմությանն ուղղակիորեն առնչվող ո՞ր գործիչն է պատկերված ծաղրանկարի կենտրոնում:
բ. Քաղաքական ո՞ր ուժն է պատկերված ձախ և աջ կողմերում կանգնած խեղդող անձանց տեսքով:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ դեմ է ապստամբել պարսից արքայի եղբայր Բարդիան. 0,5 մ.
   ա) Կյուրոս 2-րդ բ) Դարեհ 1-ին գ) Կամբիզ դ) Արտաքսերքսես 2-րդ
2. Ո՞վ է 1402 թ. Անգորայի (Անկարայի) մոտ պարտության մատնել թուրքական զորքերին. 0,5 մ.
   ա) Թեմուչին բ) Լենկ Թեմուր գ) Բաթու դ) Կոստանդին 9-րդ
3. Ե՞րբ կառուցվել Ճապոնիայի առաջին մշտական մայրաքաղաքը. 0,5 մ.
   ա) 710 թ. բ) 1192 գ) 645 թ. դ) 1603 թ.
4. Ո՞վ է Ռուսիայում քրիստոնեությունը հռչակել պաշտոնական կրոն. 0,5 մ.
   ա) Վլադիմիր բ) Ռյուրիկ գ) Իվան 4-րդ դ) Յարոսլավ Իմաստուն
5. Ինչպե՞ս էր կոչվում Կուրիգալզու 1-ինի կառուցած մայրաքաղաքը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Կոստանդին 3-րդ Ծիրանածին	ա. «Թեմերի մասին»
2. Փոթիոս	բ. «Ալեքսիադա»
3. Աննա Կոմնինա	գ. «Բազմաթիվ գրքերի նկարագրություն»
4. Դուկաս	դ. «Պատմություն»

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա) Թիգլաթպալասար 3-րդն արևմուտքում նվաճել է փյունիկյան ծովափն ու Պաղեստինը՝ հասնելով Եգիպտոս:
   բ) Հունաստանում տիրանիայի շրջանում օգտվելով ստորին խավերի դժգոհությունից և հենվելով նրանց վրա՝ առանձին մարդիկ գրավում էին իշխանությունը և սկսում միանձնյա կառավարել:
   գ) Հռոմում կայսերական կարգերի ձևավորման շրջանում գերագույն մագիստրատը պրետորն էր, որի տեղակալը կոչվում էր քվեստոր:
   դ) Հռոմեական կայսրությունում Օկտավիանոսին փոխարինել է նրա որդին՝ Տիբերիոսը:
   ե) Չանդրագուպտան Ք.ա. 305 թ. պարտության է մատնել Հնդկաստան ներխուժած Սելևկոս 1-ինի զորքերին:
   զ) Ավատատիրական աստիճանակարգության ամենավերին աստիճանին կանգնած էր թագավորը՝ որպես գյուղացիների և ճնշվածների գերագույն սենյոր:
   է) Վերդենի դաշնագիրը սկիզբ է դրել ֆրանսիայի, Իսպանիայի, Գերմանիայի կազմավորմանը:
   ը) Նիկեայի տիեզերաժողովը հաստատել է Հռոմի եպիսկոպոսի բարձր դիրքը Արևելքի աթոռների նկատմամբ:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
   ա. Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին,
   բ. Հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը:
9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



   ա. Ո՞ր թվականին է ստեղծվել միջնադարյան այս պետությունը (քարտեզում պատկերված է ենթակա պետական կազմավորումների տարածքների ներառմամբ):
   բ. Ո՞վ է ընտրվել այդ պետության առաջին միապետ:

10. Միջնադարի ո՞ր նշանավոր արքայի պատկերն է ստորև տրված. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Հետին պլանում զանգվածային տեսարանով ո՞ր իրադարձության մեկնարկն է պատկերված:
գ. Ո՞ր ռազմաքաղաքական դաշինքն է խորհրդանշում քարոզչական պաստառը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2023 թ.